«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝-<<Ներառական կրթության կարևորությունը,նպատակն ու խնդիրները հանրակրթական դպրոցում>>:

ԱՌԱՐԿԱ՝Դասվար

ՀԵՂԻՆԱԿ՝Անահիտ Առաքելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝Աղբերք գյուղի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------2-3
2. Ի՞նչ ասել է ներառական կրթություն----------4-5
3. Ներառական կրթություն՝ համակարգի, թե երեխայի հարմարեցում:----------6-13
4. Եզրակացություններ----------14
5. Օգտագործված գրականության ցանկ----------15

Ներածություն

Ներկայումս հաճախ ենք լսում <<ներառական կրթություն>> եզրույթը, շատ են կազմակերպվում քննարկումներ, վերապատրաստումներ, սեմինարներ, որոնց ժամանակ անդրադառնում են թեմային: Իսկ ի՞նչ ենք հասկանում ներառական կրթություն ասելով, որն է դրա անհրաժեշտությունը և ինչպիսի առանձնահատկություններ ունի այն:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ առանձնահատուկ կրթական կարիքներ ունեցող անձանց համար:

Ներկայումս ներառական կրթությունը համընդհանուր է բոլորի համար, սակայն դրա ոչ ճիշտ կիրառումը ունենում է հակառակ ազդեցությունը, օգնելու փոխարեն ավելի շատ վնասում է: Մեր հետազոտական աշխատանքի մեջ մենք փորձել ենք անդրադրաառնալ ներառական կրթության թեմային, հասկանալ, թե որքանով է այն արդիական և որն է դրա կարևորությունը:

Մեր ուսումնասիրության թեման՝ <<Ներառական կրթության կարևորությունը,նպատակն ու խնդիրները հանրակրթական դպրոցում>> :

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Այսօր, ցավոք ստիպված ենք բախվել այն իրականությանը, որ բազմաթիվ երեխաներ ունեն ներառման կարիք, իսկ նախքան նրանց ներառումը կրթության մեջ մեզ սպասվում է երկար և պատասխանատու նախապատրաստական ընթացք, քանզի ամենափոքր սխալն անգամ կարող է ունենալ ճակատագրական հետևանքներ: Մեր ուսումնասիրության արդիականությունը կապված է այսօր ներառական կրթության կարևորությամբ և դրա մեթոդական ճիշտ քայլաշարի մշակմամբ:

Հետազոտության օբյեկտը: Մեր հետազոտության օբյեկտը հանրակրթական դպրոցներում կազմակերպվող դասերն են՝ ներառական կրթության ձևավորման տեսանկյունից:

Հետազոտության առարկան: Մեր հետազոտութան առարկան հանրակրթական դպրոցներում կազմակերպվող դասերի ընթացքում ներառական կրթության կազմակերպման գործընթացում կիրառվող մեթոդների արդյունավետության ուսումնասիրության գործընթացն է:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բացահայտել ներառական կրթության նշանակությունն ու կարևորությունը հանրակրթական դպրոցներում և մշակել ճիշտ քայլաշար: Նշված նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ մեթոդական և վերլուծական աշխատությունները :
- Ուսումնասիրել ներառական կրթության առանձնահատկություններն ու նպատակները և վերլուծել արդյունքները :

Մեթոդները.

- Գրականության ուսումնասիրում և հիմնական սկզբունքների ներկայացում,
- փորձարարական դասերի վարում և արդյունքների վերլուծություն,
- դասալսումներ և արդյունքների քննարկում,

Թեզի կառուցվածքը և ծավալը: Մեր աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից: Հետազտության ծավալը կազմում է 14 էջ:

ԳԼՈՒԽ 1

Ի՞նչ ասել է ներառական կրթություն

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող անձանց համար: Ներառական կրթության կարևորության և առջնահերթության մասին

Ներառական կրթություն (ֆր.՝ Inclusif – ներփակված, լատ.՝ include - ներառված), կրթական համակարգ, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը: Ներառական կրթությունը ավելի մատչելի և հասանելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Մարդկության զարգացման ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ձևավորումն ու սահմանումն անցել են երկար ճանապարհ՝ խղճահարությունից մինչև սոցիալական բազմաթիվ ծառայությունների մատուցում: Այսօր աշխարհն արդեն ընդունում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման գաղափարը: Հայաստանի Հանրապետությունը 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի 2006 թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին:[1]

---

[1] Տես՝https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը նշանակում է կրթության մատչելիություն բոլորի համար, այն հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կրթության կարիքներ ունեցողները:

կան որոշ հիմնական սկզբունքներ, որոնք պետք է պահպանել ներառական կրթության ժամանակ, դրանք են՝

- **երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող, մանկապարտեզ և դպրոց,**
- **մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է բոլոր երեխաների ուսուցմանը,**
- **բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջդպրոցական միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն,**
- **ներառական կրթության զարգացմանն օժանդակում են ուսուցիչները, ծնողները, առհասարակ, բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,**
- **ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:**

Պետք է հիշել՝

– ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,

– բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար,

– կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հաշմանդամություն ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղ ընտանիքի գրկում ապրելու հետ:[2]

Ինչո՞ւ է անհրաժեշտ ներառումը

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները, իսկ ներառումը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ,իսկ նախկինում երբ չկար ներառում այդ ամենն անհնար էր: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնվորված է: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին,կողք-կողքի, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց տարբերակել և պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթություն,

[2] Տես՝https://ampop.am/inclusive-education-in-armenia/

որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը: **Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:**[3]

[3] Տես՝https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu

Գլուխ 2

Ներառական կրթություն՝ համակարգի, թե երեխայի հարմարեցում:

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն հաստատում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան

կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար: Ներառական կրթության անցնում են բազմաթիվ երկրներ՝ կրթության համեմատաբար համեստ բյուջեով և տեխնիկական միջոցների փոքր ծավալով: Այս գործունեության դրական արդյունքներից են դասավանդման որակի բարձրացումն ու սովորողների ձեռքբերումները (այդ թվում նաև՝ կրթական գործընթացից դուրս մնացած և ցածր առաջադիմությամբ աշակերտների թվի նվազեցումը):

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները: Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ:

Այսպիսով՝ ներառական կրթությունը ենթադրում՝

- Ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթական համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները: Միևնույն ժամանակ, ներառական կրթությունը չի կարող զարգանալ հանրակրթության համակարգից դուրս, առանձին: Այն չի կարող դիտարկվել որպես առանձին, առանձնահատուկ հարց կամ ոլորտ, այլ պետք է դիտարկվի որպես ամբողջ դպրոցական համակարգի զարգացման սկզբունք:
- Որոշիչ է այն հարցը, թե ինչպես է առանձին վերցրած աշակերտի համար ապահովվում, որ նա ստանա իր կարողություններին և կարիքներին համապատասխան որակյալ կրթություն: Եթե համակողմանի դիտարկենք աշակերտին, ապա դասարանական աշխատանքների պլանավորման ժամանակ վճռորոշ գործոն է համարվում դասարանում աշակերտի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար հնարավորությունների ստեղծումը:
- Մարդիկ տարբեր են, դա բնական է և ցանկացած հասարակություն դարձնում է ավելի հարուստ, և, հետևաբար, պետք է իր արտացոլումը գտնի նաև դպրոցում: Դպրոցները պետք է ապահովեն բոլոր երեխաների մասնակցությունը՝ օգտագործելով տարբեր աշխատանքային մոտեցումներ, հնարքներ և, իհարկե, անհատական մոտեցում:
- Ներառական կրթություն նշանակում է, որ դպրոցը կարողանում է լավ կրթություն տրամադրել բոլոր երեխաներին, անկախ նրանց տարատեսակ կարողություններից: Բոլոր երեխաները պետք է հարգալից վերաբերմունքի արժանանան և ստանան հավասար հնարավորություններ համատեղ սովորելու համար:
- Ներառական կրթությունը շարունակական գործընթաց է, ուստի ուսուցիչները պետք է առավել ակտիվ և գիտակից աշխատեն՝ ներառական կրթության նպատակներին հասնելու համար:[4]

---

[4] Տես՝https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

Ներառական որակյալ կրթություն. համագործակցություն, հավասարություն և մասնակցություն: Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում:

- Թե ինչ խորությամբ է առանձին աշակերտը դիտարկվում որպես դժվարություններ ունեցող, կարող է պայմանավորված լինել մի շարք գործոններով: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ դպրոցի միջավայրը՝ կազմակերպվածությունը, կիրառվող մեթոդները, տիրող վերաբերմունքը, կարող է կենտրոնական դեր ունենալ աշակերտի անհատական որակները դժվարությունների վերագրելու հարցում:
- Կարևորն այն է, որ ախտորոշումը, որն ընդգծում էր աշակերտի թերությունները, այլևս չի դիտարկվելու: Հիմնական մոտեցումը պետք է բխի այն գաղափարի ընդունումից, որ յուրաքանչյուր աշակերտ կարող է սովորել և ստեղծագործել: Դպրոցը պետք է պատասխանատվություն կրի ստեղծելու այնպիսի միջավայր, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա սովորել և ստեղծագործել: Դպրոցի միջավայրը պետք է միտված լինի զարգացնելու յուրաքանչյուր աշակերտի ներուժը և կարողությունները:
- Հաջորդ մոտեցումը չմեկուսացնելու սկզբունքն է, որը ներառական որակյալ կրթության գաղափարախոսության երրորդ հիմնաքարն է և վերաբերում է բոլոր սովորողների կարիքներին: Բոլոր խնդիրներն իրենց հանգուցալուծումները պետք է ստանան դպրոցի ներսում: Կազմակերպվածությունն ու ռեսուրսների հատկացումը պետք է բավարար չափով ճկուն լինեն, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ աջակցությունը տրամադրել անմիջապես դասարանում: Կրթության հետ կապված խնդիրները, որ աշակերտները կարող են ունենալ, պետք է շարունակաբար քննարկվեն դպրոցի մանկավարժների և հատուկ մանկավարժական աջակցության թիմի անդամների հետ համատեղ: Դրա նպատակն է հնարավորինս վաղ կանխել հնարավոր խնդիրները՝ արագ առաջարկելով հնարավոր լուծումներ:[5]

---

5 Տես՝https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf

Բացի վերը նշված կանոններից ցանկացած դպրոց պատք է նաև ինքը որդեգրի ներառական կրթության իր կանոններն ու առանձնահատկությունները, որոնք էլ ավելի կխորացնեն և կամրապնդեն ներառական կրթության առավելությունները։

Ինչպես գիտենք կրթության իրավունքը վերաբերում է բոլորին, այսինքն յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա սովորելու հանրակրթական դպրոցում՝ իր կարողություններին ու կարիքներին համապատասխան։ Այդ կարիքները պետք է բավարարվեն հանրակրթական դպրոցում և պետք է հստակ ընդգծել, որ այս իրավունքն ապահովելը դպրոցի և պետության պատասխանատվության տակ է։ Ցավոք , այսօր բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել Հայաստանի Հանրապետության դպրոցների և հասարակության կողմից։ Պետք է գիտակցել, որ Հատուկ դպրոցները չեն կարող այս հարցի լուծում հանդիսանալ, քանի որ երեխաների մեկուսացումը կամ առանձնացումը գործնականում անընդունելի է,բացի այդ շատ փոքր է այն երեխաների թիվը, որոնց կարելի է առաջարկել, որ սովորեն հատուկ դպրոցներում։ Հատուկ դպրոցները չեն կարող առանձնացված ծառայություններ լինել, դրանք պետք է շատ ակտիվ դերակատարություն ունենան դպրոցների զարգացման գործընթացում՝ որպես հանրակրթական դպրոցներին աջակցություն մատուցող ծառայությունների կենտրոններ։ Իսկ որն է այս խնդրի լուծումը և ինչ պետք է անել, որպեսզի հանրակրթական դպրոցները դառնան ներառական և այնտեղ կարողանան սովորել բոլոր երեխաները, անկախ ամեն ինչից։ Դրա համար կա մի քանի նախապայման, օրինակ՝

- **Դպրոցների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտ չհանդիսանան որևէ երեխայի դպրոցում սովորելու համար։**
- **Հատուկ և հանրակրթական դպրոցների միջև առկա պատնեշը տարիների ընթացքում աստիճանաբար կկորցնի իր արդիականությունը դպրոցական համակարգի համար, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ կստանձնի իր կարևոր դերը բոլոր երեխաներին անհրաժեշտ ծառայություններ մատուցելու նպատակով։**

Մասնագիտական տեսանկյունից դա կապահովի դասավանդման որակի բարելավում, երբ տարբեր բնագավառների մանկավարժների փորձառությունն ու մոտեցումները հնարավոր կլինի ինտեգրել:

- Աշակերտի և նրա կրթության համար արդեն պատասխանատվություն կկրի հանրակրթական դպրոցի ուսուցիչը: Ռեսուրս-ուսուցիչների առկայությունը չի ենթադրի, որ նրանք կարող են ստանձնել այդ պարտականությունը հանրակրթական դպրոցի ուսուցչի փոխարեն:
- Յուրաքանչյուր դպրոցի տնօրեն պատասխանատու կլինի, որ դպրոցի ծրագրերն ու դպրոցը մատչելի լինեն բոլոր երեխաների համար, հաշվի առնեն երեխաների կարիքները, պարբերաբար վերամշակվեն, իրականանան և գնահատվեն: Նման ծրագրերի և դրանց գնահատման արդյունքները կխթանեն դասավանդման նոր մոտեցումներ և ծրագրեր: Այն փաստը, որ ուսուցիչները համատեղ ուժերով, համատեղ քննարկմամբ կառաջարկեն մեթոդներ ու լուծումներ դասավանդման կոնկրետ խնդրի հաղթահարման, կոնկրետ աշակերտի կարիքներին համապատասխան ուսուցումը կազմակերպելու համար, կարևոր մաս կկազմի դասավանդման որակը բարելավելու գործընթացում:
- Անկախ այն հանգամանքից, թե որքանով արդյունավետ ուսում է ստանում աշակերտը դպրոցում, ընտանիքի մասնակցությունը համարվում է անփոխարինելի պայման, եթե մենք ցանկանում ենք ապահովել, որ երեխայի ստացած գիտելիքները կիրառվեն տանը կամ իրական կյանքի այլ իրավիճակներում: Փորձը ցույց է տալիս, որ ընտանիքի անդամները կարող են կարևոր ռեսուրս լինել, եթե պատշաճ կերպով տեղեկացվեն, նախապատրաստվեն, նրանց վստահություն և հավատ ներշնչվի, և ոչ մի ջանք չպետք է խնայել ուղղելու և ուղղորդելու նրանց աջակցությունը երեխայի հետ աշխատանքում:
    - Ամբողջ կրթության նպատակը պետք է ուղղված լինի անհատի կարիքներին, և շատ կարևոր է, որպեսզի գնահատման ռազմավարությունը մշակված լինի առաջընթացի գնահատումը խթանելու նպատակով: Գնահատումը պետք է ուղղված լինի դրական զարգացումները բացահայտելուն:[6]

[6] Տես՝ https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf

Այսօր պետք է գիտակցենք, որ ներառական կրթությունը ՀՀ-ում ունի շատ բացթողումներ և բացեր, և դրանք պետք է շտկվեն: Իսկ երբ ՀՀ-ում անցում կատարվեց ներառական կրթության և համընդհանուր ներառման:

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության: Համաձայն օրենքի՝ մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը հանրապետությունում կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը:

- Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:
- Կկիրառվի երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:
- Մինչև 2022 թվականի օգոստոսի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվելու է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի:

Եթե տվյալ մարզում առկա չէ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն, ապա մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կարող է վերակազմակերպվել կամ պատվիրակվել այնպիսի կազմակերպության, որում առկա են ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմաններ:

Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում կներդրվեն ուսուցչի օգնականի հաստիքներ, որոնց թիվը որոշվելու է տվյալ դպրոցում սովորողների միջին տարեկան թվի 10 տոկոսի հաշվարկի հարաբերակցությունից՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված կարգի (*ՀՀ կառավարության 16 փետրվարի 2017 թվականի «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար սահմանված ֆինանսավորման բարձրացված չափաքանակի սանդղակը՝ ըստ երեխայի կարիքի ծանրության աստիճանի սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 2011 թվականի հունվարի 27-ի N 46-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 141-Ն որոշում*):

Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը կներդրվի համընդհանուր ներառական կրթության համակարգը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած գործողությունների պլանի և ժամանակացույցի (ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի արձանագրային որոշում՝ «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին եվ ժամանակացույցին հավանություն տալու մասին»):

2015թ. փետրվարի 17-ի ՀՀ վարչապետի N108-Ա որոշմամբ հաստատվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը»:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում:[7]

Չնայած օրենքի այսքան հստակեցումների ՀՀ-ն ունի համընդհանուր ներառման հետ կապված մի շարք ոնդիրներ, օրինակ՝ Հայաստանում ներառական կրթության համակարգի ներդրման խնդիրներից ամենաելակետայինն այն է, որ այդ համակարգի ներդրումը կապվել է պետությունից լրացուցիչ գումար ստանալու ակնկալիքի հետ: : **Վերջին տարիներին բացահայտվեցին մի շարք դեպքեր, երբ դպրոցներում արձանագրվել էին չարաշահումներ, յուրացումներ, ներառական կրթության համար հատկացված ռեսուրսներն այլ նպատակներով օգտագործելու դեպքեր: Պետությունից լրացուցիչ գումարներ կորզելու նպատակով երեխաները ընդգրկվել էին ներառական կրթության համակարգում**[8]**:** Հայաստանում գրեթե բոլոր դպրոցների ֆիզիկական միջավայրը շատ հեռու է ներառական կրթության համար անհրաժեշտ պայմաններից: Միակ բանը բոլոր դպրոցներում կա, մուտքի թեքահարթակն է: Մնացած առումներով ենթակառուցվածքները չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին: Մարզադահլիճների, հանդիսությունների դահլիճների, զուգարանների հասանելիության հարցը մնում է անլուծելի: Ինչ վերաբերում է հատուկ կարիքներ ունեցող երեխաների անհատական ուսումնական պլաններին, ապա ուսումնասիրության ընթացքում բացահայտվել է, որ դպրոցներում դա համարում են ձևական գործիք, որն ընկալվում է որպես գրավոր փաստաթուղթ, թղթավարության մաս: Ընդհանուր առմամբ, շատ խնդրահարույց է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը: Ըստ

[7] Տես՝https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
[8] Տես՝https://uic.am/9283

մշտադիտարկման արդյունքների, երեխաների գնահատման գործընթացը շատ կարճ է տևում, ինչը հնարավորություն չի տալիս երեխային տեսնել ավելի ամբողջական, տարբեր իրավիճակներում և ճիշտ գնահատել: Արդյունքում՝ կան մտահոգություններ, որ երեխաների խնդիրները «մեղմ» են գնահատվում, ինչի հետևանքով երեխան չի համարվում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող, իսկ որոշ երեխաների խնդիրներն էլ թեթև են գնահատվում:

Եզրակացություններ

Այսպիսով մեր հետազոտության ընթացքում մենք եկանք հետևյալ եզրակացություններին՝

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում,

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:
- Հայաստանում գրեթե բոլոր դպրոցների ֆիզիկական միջավայրը շատ հեռու է ներառական կրթության համար անհրաժեշտ պայմաններից: Միակ բանը բոլոր դպրոցներում կա, մուտքի թեքահարթակն է: Մնացած առումներով ենթակառուցվածքները չեն համապատասխանում ներկայացվող պահանջներին: Մարզադահլիճների, հանդիսությունների դահլիճների, զուգարանների հասանելիության հարցը մնում է անլուծելի:
- հատուկ կարիքներ ունեցող երեխաների անհատական ուսումնական պլաններիը, դպրոցներում համարվում է ձևական գործիք, որն ընկալվում է որպես գրավոր փաստաթուղթ, թղթավարության մաս:
- Ընդհանուր առմամբ, շատ խնդրահարույց է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացը: , երեխաների գնահատման գործընթացը շատ կարճ է տևում, ինչը հնարավորություն չի տալիս երեխային տեսնել ավելի ամբողջական, տարբեր իրավիճակներում և ճիշտ գնահատել: Արդյունքում՝ կան մտահոգություններ, որ երեխաների խնդիրները «մեղմ» են

գնահատվում, ինչի հետևանքով երեխան չի համարվում կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող, իսկ որոշ երեխաների խնդիրներն էլ թեթև են գնահատվում:

Օգտագործված գրականության ցանկ

1. https://aspu.am/website/images/website/dasagirq_nerarakan.pdf
2. https://www.unicef.org/armenia/media/3501/file/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%BC%D5%A1%D5%A6%D5%B4%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80.pdf
3. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
5. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_8.pdf
6. https://www.arlis.am/documentview.aspx?docid=67166
7. http://old-edu.escs.am/index.php/am/documents/download/5430
8. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=103910